

184 Բայց յորմէ դուդ գարիւրեալ ես՝ դիւրահաւան լեր, եւ վաղվաղակի աշակերտիս ճշմարտութեանս<sup>2</sup>:

185 Ոմն ի հրեշտակաց յանմահիցն<sup>3</sup> գնդեն<sup>4</sup> ստամբակեալ<sup>5</sup> եւ ի բաց գնացեալ յերկնից, եւ<sup>6</sup> ի մեր աշխարհս եկեալ՝ պատիր բանիւք եւ սուտ խոստմամբ<sup>7</sup> զանլինելի յոյսն<sup>8</sup> առաջի դներ<sup>9</sup> իբրեւ տղայ մանկան՝ անփորձ եւ անկիրթ նորաթեք<sup>10</sup> մարդոյն, ի վեր<sup>11</sup> հայեցուցանելով զմիտս նորա, ուտելով<sup>12</sup> ի պտղոյ ծառոյն, յոր հուպն չիրամայեաց երթալ<sup>13</sup>, զի լիցի աստուած: 186 Իսկ նորա մոռացեալ զպատուիրանն Աստուծոյ, խաբեցաւ<sup>14</sup> զկնի մոլար խաբէութեանն<sup>15</sup>, <sup>16</sup>կորոյս զոր ուներ զփառս<sup>17</sup> անմահութեանն<sup>18</sup>, <sup>19</sup>եւ չեհաս երազայոյս կարծեացն: 187 Վասն որոյ եւ<sup>20</sup> մերժեալ ի կենաց<sup>21</sup> տեղոյն, ընկեցաւ<sup>22</sup> յապականելի<sup>23</sup> աշխարհս<sup>24</sup>, յորում եւ<sup>25</sup> դուք<sup>26</sup> էք բնակեալ այժմ<sup>27</sup>, եւ ցնորեալ մոլորիք<sup>28</sup> զկնի նորին խրատողի<sup>29</sup>. ոչ եւս ուտելով<sup>30</sup> ի պատուիրեալ ծառոյն<sup>31</sup>, այլ զարարածս աստուած<sup>1</sup> ասելով<sup>2</sup>, եւ անխաւս տարերցս<sup>1</sup> երկիր պագանելով<sup>2</sup>, եւ անորովայն<sup>3</sup> դիւաց կերակուր<sup>4</sup>

1 <sup>Ծ</sup> առնուցումք *փ/ս* ունիցիմք

2 *ԳԿ* ճշմարտութեամբ *Ե* ճշմարտութեան

3 *ԲԴՏ*<sup>2</sup> յանմահ

4 *ԳԵԸԺ* գնդէ

5 *ԱԳԴԶԷԸԺԽՅՎ* չիք եւ *Ա* չիք եւ (ի բաց) *ՎՏՅ*<sup>1852</sup> *Ա* եւ ի բաց գնաց

6 *ԳԵ* աշխարհի *ԹԻ* ի մեր աշխարհս եկեալ

7 *ԱԲԳԵԶԷԸԺԽՅՏՅՏ*<sup>2</sup> խոստմամբք

8 *ԲԴ* զյոյսն *ԳԺԽԿ* յոյսս

9 *ԳԽԿ* դնել <sup>Ծ</sup> եղեալ

10 *Կ* նորաթաղ (!)

11 *Ի* եւ վեր

12 *ԶԵՎ* չիք զմիտս նորա, ուտելով *Ի* ուխտելով *փ/ս* ուտելով *Ա* ուտել

13 *ԴԵԸԺԼԽՅՏՅՏ*<sup>1</sup> *Տ*<sup>2</sup> իրամայեաց չերթալ <sup>Ծ</sup> յոր հուպ լինել չիրամայեաց: չիք երթալ

14 *ԱԴՏ*<sup>2</sup> խաբեալ

15 <sup>Ծ</sup> չիք զկնի մոլար խաբէութեանն *Ե* խաբէութեան

16 *ԲԴՏ*<sup>2</sup> <sup>Ծ</sup> կորոյս զանմահութեան զփառսն զոր ուներ

17 *ԳԿ* փառս

18 *ԵԷԸԴ* անմահութեան

19 *ԲԴ* եւ երազայոյս կարծեացն չեհաս *Ը* երազայոյս կարծեացն

20 *ԲԴ* չիք եւ

21 *Ե* ի կենացն

22 *Խ* անկաւ

23 *Ի* ապականելի

24 *ԲՏ* արտաքս անգաւ *Դ* արտաքս անկեալ *Կ* կենցաղս *փ/ս* աշխարհս

25 *ԵԺԽ* չիք եւ

26 *ԱԳԶԷԹԻՎԿ*<sup>1852</sup> դուքս

27 *ԲԴՏ*<sup>3</sup> այժմ բնակեալ էք <sup>Ծ</sup> չիք այժմ

28 *ՏՏ*<sup>1</sup> մոլիք *փ/ս* մոլորիք (*Տ*<sup>1</sup> մոլիք զկնի նորա) *Դ* ցնորիք մոլորեալ

29 *Գ* (նորին) խրատողի *ԵԸԺԼԽՅՏ*<sup>1</sup> (նորին) խրատուն *ԶԷԹԻՎ* խրատուի *ԲԴՏ*<sup>2</sup> խրատու

30 *Դ* ոչ ուտելով եւս *Թ* ուտել

31 *ԳԵԸ* ծառոյ